ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07

ք. Երևան

« 14 » հունիսի 2024թ.

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամը ի դեմս ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր Ս. Եզդողլյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ներսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն՝ պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը։.

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային

փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **7,790,522 (յոթ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ, որից 1,298,420 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունութ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ ԱԱՀ:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[2].

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	**Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել**	**Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով**
2	**Տեխնիկական անվտանգության նորմերի չպահապանելը**	**Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով**
3	**Սանիտարահիգենիկ և բնապահպանական**	**Տուգանք – պայմանագրային գնի 0.5%**

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ	«ՍԵՊ» ՍՊԸ
Ք. Երևան, Իսահակյան 36	Ք. Գյումրի, Հալաբյան փ., շ 3/3/27
<<ԱյԴի ԲԱՆԿ>> ՓԲԸ, Տիգրան Մեծի մ/ճ	«Ակբա բանկ»
Հ/Հ 11815000774800	Հ/Հ 220273331300000
ՀՎՀՀ 01505555	ՀՎՀՀ 05552368
Ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր Ս. Եղոյան	Տնօրեն Մ. Մնացականյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված թիվ 1
« 14 » հունիսի 2024 թ. կնքված
ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ - նախահաշիվ

ՀԳՊԱ հիմնադրամ Գյումրու մասնաճյուղի ձեղնահարկի ընդլայնման աշխատանքների

N/N	Աշխատանքների և ծախսերի շիֆ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ		Առավելագույն կշիռ %
					Միավոր	Ընդամենը	
1	2	3	4	5	6	7	
1	1	**Քանդման և մաքրման աշխատանքներ**					
2	2	*Տանիք*					
3	46--96	Տանիքի ծածկույթի ապամոնտաժում	մ²	40	0.00	0.00	
4		*Ընդամենը*				*0.00*	*0.09*
5		*Միջնորմներ*					
6	46--88	Պենզաբետոնե սալերից միջ-նորմների քանդում 100մմ հաստ.	մ2	11.00	0.00	0.00	
7		*Ընդամենը*				*0.00*	*0.20*
8		*Դռներ*					
9	46--124	Փայտից դռների քանդում /վերադարձ/	մ2	7.20	0.00	0.00	
10		*Ընդամենը*				*0.00*	*0.19*
11		*Այլ աշխատանքներ*					
12	23--228	Շինարարական աղբի բարձում ձեռքով ավ-տոինքնաթափի վրա	տ	1.50	0.00	0.00	
13	C310-11	Շին աղբի տեղափոխում 11կմ	տ	2.70	0.00	0.00	
14		*Ընդամենը*				*0.00*	*0.13*
15		**Ճարտարապետական և կոնստրուկտիվ մաս**					
16		*Մետաղական կար-կաս /շրջանակներ/*					
17	9--156 կիրառ	Մետաղական կարկասի իրականացում	տ	0.5660	0.00	0.00	
18		Մետաղական սյուն ՄՍ1-2 140*4մմ	գծ.մ	10.28	0.00	0.00	
19		Մետաղական հեծան ՄՀ 180*140*5մմ	գծ.մ	15.00	0.00	0.00	
20		Մետաղական ներդիր էլեմենտ	տ	0.03	0.00	0.00	
21		Ինքնապարուրվող պտու տակ d16մմ L-100մմ	հատ	16.00	0.00	0.00	
22		*Ընդամենը*				*0.00*	*8.93*
23		*Տանիք*					
24	10--73	Տանիքի փայտե կմախքի իրականացում /տախ-տակամած,կանգնակ, մարդակ	մ³	1.10	0.00	0.00	
25	12--280 կիրառ	Թիթեղից ծածկույթի իրակա-նացում գործարանային ներկա-ծածկույ-թե թիթեղով 0,6մմ հաս.	մ²	84.00	0.00	0.00	
26	12--289	Գոլորշամեկուսիչ շերտի իրա-կանացում իզոգամով 4մմհաստ	մ²	105.00	0.00	0.00	

27	12--289 կիրառ	Հիդրոմեկուսիչ շերտի իրակա-նացում թաղանթից 0,3մմ հաստ	մ^2	105.00	0.00	0.00	
28	12--286	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100մմ հաստ EN13497	մ^2	105.00	0.00	0.00	
29		*Ընդամենը*				*0.00*	*22.05*
30		*Միջնորմներ*					
31	6--1	Միջնորմների տակ բետոնե հիմք B12,5	մ^3 м3	0.500	0.00	0.00	
32	8--140	Թեթև բետոնե բլոկներց միջնորմների իրականա-ցում 20*20*40սմ հաստ	մ^3 м3	4.400	0.00	0.00	
33	8--169	Թեթև բետոնե բլոկներց միջնորմների իրակա-նացում 10*20*40սմ հաստ /օդափոխ.հորանի համար/	մ^2 м2	78.000	0.00	0.00	
34	8-150	Անցքերի լցափակում թեթև բետոնով B15Դ-ի	մ^3 м3	4.270	0.00	0.00	
35	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում	տ т	0.121	0.00	0.00	
36		6Ac-1 դասի ամրանի արժեքը	տ т	0.043	0.00	0.00	
37		12A-500c դասի ամրանի արժեքը	տ т	0.162	0.00	0.00	
38		Փրփուր	հատ	15.000	0.00	0.00	
39		Դյուբելներ	հատ	255.00	0.00	0.00	
40	6--170	Ե/բ բարավորների իրականա-ցում B15դասի բետոնով	մ^3	0.200	0.00	0.00	
41		6Ac-1 դասի ամրանի արժեքը	տ т	0.003	0.00	0.00	
42		12A-500c դ-ի ամրանի արժեքը	տ т	0.011	0.00	0.00	
43		*Ընդամենը*				*0.00*	*14.26*
44		*Պատուհաններ*					
45		Մետաղապլաստե պատուհան-ների տեղադրում 60մմ պրոֆի-լով 4+4մմ ապակեփաթեթով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ / բացվող	մ^2 м2	2.400	0.00	0.00	
46		Մետաղապլաստե պատուհան-ների տեղադրում 60մմ պրոֆի-լով 4+4մմ ապա-կեփաթեթով /տեղադրու-մը, տեղափոխումը փա-կանների հետ միասին ներառված է գնի մեջ/ չբացվող	մ^2 м2	4.400	0.00	0.00	
47		*Ընդամենը*				*0.00*	*4.12*
48		*Դռներ*					
49	տեղեկագիրинформ бюлетена	Մետաղապլաստե դռների տե-ղադրում 60մմ պրոֆիլով ապակեփաթեթով /տեղադրումը, տեղափոխումը փական-ների հետ միասին նե-րառված է գնի մեջ/Դ-6-10	մ^2 м2	7.200	0.00	0.00	
50	10--105	Ապամոնտաժված փայ-տե դռան տեղադրում	մ^2 м2	2.400	0.00	0.00	
51		*Ընդամենը*				*0.00*	*6.27*
52		*Հատակներ*					
53	11--4	Խարամե շերտի իրակա-նացում 4սմ հաստ	մ^3	9.000	0.00	0.00	

54	6--86	Հատակների բետոնե ենթաշերտի ամրանավորում 5կթ150*150 քայլով	տ т	0.1900	0.00	0.00	
55		Ամրան 5կթ150*150 քայլով	տ т	0.19	0.00	0.00	
56	11-55 11--56	Բետոնե հարթեցնող շերտի իրականացում 50մմ հաստութ.	մ2 м2	90.000	0.00	0.00	
57	11-135	Հատակի պատում կերամագրանիտե սալիկներով	մ2 м2	90.000	0.00	0.00	
58		*Ընդամենը*				*0.00*	*15.97*
59		*Ներքին հարդարման աշխատանքներ*					
60	15--246-1	Պատերի լավորակ սվաղ գաջով	մ2 м2	225.00	0.00	0.00	
61	15--660	Պատերի լավորակ ներկում լատեքսաներկով	մ2 м2	225.00	0.00	0.00	
62	10--33կիրառ	Պլաստմասե շերտաձո-ղերով կախովի առաստաղի իրականացում, փայտե կարկասի վրա	մ2 м2	105.0	0.00	0.00	
63		*Ընդամենը*				*0.00*	*22.66*
64		էլեկտրատեխնիկա-կան մաս					
65		*Մոնտաժ*					
66	8--525-1	Ինքնավար անջատիչ միաբևեռ միաֆազ 1*25Ա	հատ шт	2	0.00	0.00	
67	8--525-1	Ինքնավար անջատիչ միաբևեռ միաֆազ 1*10	հատ шт	1	0.00	0.00	
68	8-593-1	Լուսատու լուսադիոդ-դային 40վտ 220վ պատի 1185*295մմ	հատ шт	12	0.00	0.00	
69	8-593-1	Լուսատու լուսադիոդ-դային 40վտ 220վ /պատի/ 595*295մմ	հատ шт	2	0.00	0.00	
70	8--591-7	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով 16Ա ներքին հողանցիչով	հատ шт	10	0.00	0.00	
71	8--591-2	Անջատիչ միստեղանի ներքին տեղադրման	հատ шт	1	0.00	0.00	
72	8--591-2	Անջատիչ երկստեղանի միաբևեռ ներքին տեղադրման	հատ шт	2	0.00	0.00	
73		Տուփ ենթավարդակային անջատիչային	հատ шт	13	0.00	0.00	
74		Տուփ բաժանարար ներքին տեղադրման անջատիչային	հատ шт	13	0.00	0.00	
75	8--148-9	Մալուխ պղնձե բազմա ջիղ ШВВП 3*1,5քառ.մմ վինիլային մեկուսաչիով	գծ.մ п.м	72	0.00	0.00	
76	8--148-9	Մալուխ պղնձե բազմա ջիղ ШВВП 3*2,5քառ.մմ վինիլային մեկուսաչիով	գծ.մ п.м	118	0.00	0.00	
77		*Ընդամենը*				*0.00*	*3.60*
78		Ջեռուցում					

79	18--128	Մետաղական ռեգիստր-ների տեղադրում 60*30մմ խողովակներից	գծ.մ п.м	30	0.00	0.00	
80	16--56	Մետաղական խողովակների տեղադրում D-63 մմ	գծ.մ п.м	3	0.00	0.00	
81		Մետաղական արմունկ D-63 մմ	հատ шт .	4	0.00	0.00	
82	18--	Ավտոմատ օդահանիչ d-15մմ	հատ шт	2	0.00	0.00	
83	18--229	Մետաղական փական d-15մմ	հատ шт	2	0.00	0.00	
84	15--614	Մետաղական ռեգիստրների և խողովակի յուղա-ներկում 2 անգամ լավորակ	մ^{2}м^2	3.3	0.00	0.00	
85		Ընդամենը				*0.00*	*1.53*
86		Ընդհանուրը				7221.48	100.00

Չնախատեսված ծախսեր 1,5%		108.32
Ընդամենը		7329.80
ԱԱՀ 20%		1465.96
Ընդամենը		8795.76

*** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Քաղաք Գյումրի Անկախության 1 հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի գեղարվեստի
պետական ակադեմիա» հիմնադրամ
Ք. Երևան, Իսահակյան 36
<<ԱյԴի ԲԱՆԿ>> ՓԲԸ, Տիգրան Մեծի մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ 01505555
Ֆինանսատնտեսական գծով
պրոռեկտոր Ա. Մելքումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԵՊ» ՍՊԸ
Ք. Գյումրի, Հալաբյան փ., շ 3/3/27
«Ակբա բանկ»
Հ/Հ 220273331300000
ՀՎՀՀ 05552368
Տնօրեն Ս. Կերոսիկյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
«14» հունիսի 2024թ. կնքված
***ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07** ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀԳՊԱ հիմնադրամ Գյումրու մասնաճյուղի ձեղնահարկի ընդլայնման աշխատանքների կատարման

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀԳՊԱ հիմնադրամ Գյումրու մասնաճյուղի ձեղնահարկի ընդլայնման աշխատանքներ՝ համաձայն Ծավալաթերթ-նախահաշվի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	***60 օրացուցային օր***
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	***60 օրացուցային օր***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի գեղարվեստի
պետական ակադեմիա» հիմնադրամ
Ք. Երևան, Իսահակյան 36
<<ԱյԴի ԲԱՆԿ>> ՓԲԸ, Տիգրան Մեծի մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ 01505555
Ֆինանսատնտեսական գծով
պրոռեկտոր՝ Ա. Եզորոյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՍԵՊ» ՍՊԸ
Ք. Գյումրի, Հալաբյան փ., շ 3/3/27
«Ակբա բանկ»
Հ/Հ 220273331300000
ՀՎՀՀ 05552368
Տնօրեն՝ Մ. Ջեռոհիլյան

/ստորագրություն/

Հավելված 1.1
ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07 ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ
հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

<<ՍԵՊ>> ՍՊԸ-ն հավաստում է, որ ***ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07*** ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

«ՍԵՊ» ՍՊԸ-ի տնօրեն _____ Մ. Ներսիսյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 3
« 14 » հունիսի 2024թ. կնքված
***ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/1	ՀԳՊԱ հիմնադրամ Գյումրու մասնաճյուղի ձեղնահարկի ընդլայնման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	7,790,522	7,790,522	7,790,522	7,790,522	7,790,522

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի գեղարվեստի
պետական ակադեմիա» հիմնադրամ
Ք. Երևան, Իսահակյան 36
<<ԱյԴի ԲԱՆԿ>> ՓԲԸ, Տիգրան Մեծի մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ 01505555
Ֆինանսատնտեսական գծով
պրոռեկտոր՝ Ա. Եղորոյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՍԵՊ» ՍՊԸ
Ք. Գյումրի, Հալաբյան փ., շ 3/3/27
«Ակբա բանկ»
Հ/Հ 220273331300000
ՀՎՀՀ 05552368
Տնօրեն՝ Ս. Սերգիսյան

/ստորագրություն/

Հավելված 4.1
« 14 » հունիսի 2024թ. կնքված
***ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 ___ թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
« 14 » հունիսի 2024թ. կնքված
***ՀԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-2024/07** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.